

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի, 5-րդ մասի ու Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ին ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի թիվ 874-Ա որոշման պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի մայիսի 8-ի <<Գավառի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին թիվ 92-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Գավառի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ, լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով, կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) կանոնադրության 4.2 կետի 1-ին պարբերության մեջ <<46 700 000>> թիվը փոխարինել <<64 060 000 /վաթսունչորս միլիոն վաթսուն հազար/>> բառերով և <<4670>> թիվը փոխարինել <<6406 /վեց հազար չորս հարյուր վեց/>> բառերով .

2) կանոնադրության 4.2 կետի 2-րդ պարբերության մեջ <<4670>> թիվը փոխարինել <<6406 /վեց հազար չորս հարյուր վեց/>> բառերով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Գավառի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը:

3. <<Գավառի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին (Ա. Վ. Կարապետյան)՝ սահմանված կարգով և ժամկետում ընկերության կանոնադրության փոփոխությունը ներկայացնել իրավաբանական անձանց պետական ռեգիստրին՝ գրանցման համար:

4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ